

սքանչելութեանն կայ պահեալ առ նոսա երեւոյթ փայտն հայրապետական նոյեան տապանին:

27 Ապա յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն Յայաստանէ սքանչելի եպիսկոպոսն Յակոբ. խաղաց գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառայն արքային Յայոց առ Մանաճիրի Ռըշտունի, եւ եկն թափեցաւ յաշխարհ նորա: 22 Վասն զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր չար եւ անզգամ է, եւ զուր տարապարտ¹ ի ցասմանէ դառնութեան սրտին իւրոյ կոտորէ անթիւ մարդիկ: 23 Եկն ուսուցանել եւ խրատել զնա, զի յահէ Տեառն երկուցեալ՝ դարձցի յընդանութեան բարս, եւ մեկուսի ի վայր դիցէ զանասնաբար զազանամտութիւն մոլեգնութեանն իւրոյ: 24 Իսկ իբրեւ ետես զնա, արհամարհեաց, ծաղր եւ այսն առնէր անաւրէնն Մանաճիրի զայրն Աստուծոյ զՅակոբ եպիսկոպոսն: 25 Եւ առ վայրենի բարուցն իւրոց՝ զոր ունէր յանձին իւրում, իբրեւ նմա հեճուկս առնելոյ, ութ հարիւր այր՝ որ կային ի կապանս առանց յանցման՝ ետ ածել առաջի նորա, եւ հրամայեաց ի դահճէ միոջէ ի ծով անդր հոսել. եւ զայնչափ հոգի առանց յանցման կորուսանել, եւ կատակութեամբ ծաղու հրամայէր հալածել զնա յաշխարհէն իւրմէ: 26 Եւ ասէ. Առ քում բարեսացութիւնդ տեսե՞ր զհա՛րոյ մեծարեցի զքեզ. դիւր արարի նոցա ի կապանացն, եւ ի ծովուն դեռ դուղին: 27 Իսկ նա զնացեալ անտի մեծաւ տրտմութեամբ՝ ըստ հրամանի պատուիրանին Տեառն իւրոյ թաւթափէր զփոշի ոտից իւրոց ի վերայ նոցա: 28 Գայր հասանէր ի լեռն երկաթահատացն եւ կապարահատացն, եւ որ ընդ նմայն էին, ընդ Ըռըշտունիս : 29 Եւ բաժանէր լեռն բարձր, ուստի երեւէին գաւառքն բովանդակ, որուս անուն Ընծաքիսար² կոչէին: 30 Իբրեւ հուպ եղէ յայն լեռն ի ստորոտ լերինն, քանզի բազում աւուրք էին զի չէր ինչ բնաւ ամենեւին ճաշակեալ, եւ ծարաւեաց խիստ ծարաւով: 31 Եկաց յաղաւթս առ Տէր, դներ ծունր, եւ եղ զգլուխ իւր ի վերայ երկրի, եւ թխեաց աղբիւր, ուստի արք ինքն եւ որք ընդ նմայն էին: 32 Եւ եղէ այս ըստ առաջին աւրինակին. որպէս արար ի Սարարաղ լերինն, տոյնպէս եւ առ ոտին Ընծաքիսար լերինն ի ծովեզերն Ըռըշտունեաց ծովուն, որ ըստ առաջնոյն աւրինակի կոչի եւ այս աղբէր Յակոբայ մինչեւ ցայսար ժամանակի:

33 Եւ ելանէր քահանայապետն Աստուծոյ Յակոբ ի գլուխ լերինն Ընծաքիսար, եւ նզովէր զաշխարհն, զի մի՛ պակասեցէ անտի խռովութիւն մինչեւ ի սպառ, փոխանակ տէրունի խաղաղութեան՝ որ ոչ լուան: 34 Եւ սուրբ անտարանիչ եպիսկոպոսն զնաց ի տեղի իւր: 35 Իսկ յայնմ գաւառի, յետ զնալոյ նորա անտի, յետ երկուց աւուրց սատակեցաւ կինն Մանաճերիայ եւթն որդւով իւրով. յետոյ եւ ինքն չարամահ ծակոտեալ ելանէր մեծաւ տանջանաւք

1 *Յորինակի միում* դատապարտ

2 *Յոր. Ընծաքիարս. ուղղ. ըստ Յովի. Կաթ. եւ Վարդանայ Ընծաքիսար*